ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» դեկտեմբերի 2021 թվականի N 1331

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Չարենցավանի Թումանյան փողոցի հարակից տարածքում գտնվող 29 քմ արտաքին մակերեսով՝ Հովիկ Բարբառյանի կողմից ինքնակամ կառուցված առևտրի սրահը ճանաչել օրինական համայնքային սեփականություն և ներկայացնել գրանցման:
2. Առևտրի սրահի սպասարկման նպատակով հատկացնել 32 քմ մակերեսով՝ բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա (նկատի ունենալով, որ շինության զբաղեցրած հողատարածքով անցնող ջրագիծը տեղափոխվել է «Չարենցավան քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավումը» ծրագիրն իրականացնելու ընթացքում):
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք.*Չարենցավան Թումանյանի փողոց թիվ 42*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Հովիկ Բարբառյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀԿոտայքիմարզիՉարենցավանհամայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանիանվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» դեկտեմբերի 2021 թվականի N 1330

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 18-ի «Չարենցավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 9 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

Գրիգորյան	Գյուլիզար	AN0534462	30 000	դրամ
Մկրտչյան	Կարինե	009330259	20 000	դրամ
Երանոսյան	Էդվարդ	009351768	20 000	դրամ
Հայրապետյան	Վարազդատ	AR0329763	20 000	դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» դեկտեմբերի 2021 թվականի N 1329

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Չարենցավանի 3-րդ թաղամասի 4-րդ շենքի շրջակայքում գտնվող 25 քմ արտաքին մակերեսով՝ Արուսյակ Հովհաննիսյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակը /ներքին մակերես՝ 23.0 քմ/ ճանաչել օրինական համայնքային սեփականություն և ներկայացնել գրանցման:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 25 քմ մակերեսով՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան 3-րդ թաղամաս 1-ին փողոց 1-ին փակուղի թիվ 1/9*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Արուսյակ Հովհաննիսյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«09» դեկտեմբերի 2021 թվականի N 1328

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 15-Ն հրամանով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Չարենցավանի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» թիվ 859 որոշումը, ***որոշում եմ.***

1. 2021 դեկտեմբերի 10-ին ժամը 10:00-ին Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետի /2.3-2/, Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետի /2.3-3/, քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտես. և բնակկոմունալ տնտեսության բաժնի գլխավոր մասնագետի /2.3-4/, քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտես. և բնակկոմունալ տնտեսության բաժնի գլխավոր մասնագետի /2.3-5/, քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտես. և բնակկոմունալ տնտեսության բաժնի գլխավոր մասնագետ-հողաշինարարի /2.3-6/, առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի /2.3-7/, կրթության, մշակույթի սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի գլխավոր մասնագետի /2.3-9/, զարգացման ծրագրերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետի /2.3-10/, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի /2.3-12/ ատեստավորումը անցկացնելու նպատակով ստեղծել ատեստավորման հանձնաժողով՝ ՀՀ Կոտայքի մարզպետի, համայնքապետարանի, Չարենցավան համայնքի ավագանու և Չարենցավանի ուսումնական հաստատությունների կողմից առաջարկված թեկնածուների անվանական տվյալների հիման վրա և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն ***հավելվածի:***

1.1 Լիազորված անձ նշանակել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սուրեն Մուրադյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի
2021 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 1328 որոշման

10/12/2021
10:00

09/12/2021 14:46:03

Հանձնաժողովի կազմը

Սերգեյ Սպարտակի Հովհաննիսյան
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Բաժնի պետ

Հնիկ Ազատի Բալբաբյան
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Բաժնի պետ

Ռոբերտ Թումոյան
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Բաժնի պետ
Այլ տվյալներ՝ tumoyan.robert@mail.ru

Արմեն Հակոբյան
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Բաժնի պետ
Այլ տվյալներ՝ armenakobyan@mail.ru

Արսեն Խլղաթյան
Հաստատությունը՝ Ավազանի
Պաշտոնը՝ Ավազանի
Այլ տվյալներ՝ armenarzakan@mail.ru

Արմինե Փանոսյան
Հաստատությունը՝ Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ
Պաշտոնը՝ Տնօրեն
Այլ տվյալներ՝ parmine@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» դեկտեմբերի 2021 թվականի N 1327

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և քննարկելով Չարենցավան քաղաքի3-րդ թաղամաս 35-րդ շենք, բնակարան 7 հասցեի բնակիչ ***Ցոլակ Գինոսյանի*** 2021 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 5145/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1995 թվականի հոկտեմբերի 26-ի «Պետական ֆոնդի տներում բնակարանները քաղաքացիների կողմից անվճար սեփականաշնորհելու մասին» թիվ 12 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 3-րդ թաղամաս 35-րդ շենք թիվ 7 բնակարան) ***«Գինոսյան Խորիշ Մաղակի»*** անունը փոխարինել ***«Գինոսյան Խորիշ Մաղաքի»*** անունով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«08» դեկտեմբերի 2021 թվականի N 1326

ԽՈՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՖԱՆՏԱՆ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17/17 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Խ. Մարգարյանի 2021թ. դեկտեմբերի 06-ի թիվ 5098/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել ***Խորեն Մարգարյանին*** պատկանող Չարենցավան համայնք գյուղ Ֆանտան 1-ին փողոց թիվ 17/17 հասցեում 0.38927 հա մակերեսով հողատարածքի վրա կառուցված 1922.39 քմ մակերեսով ջերմատան հողհատկացման հիմքերը:
2. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«07» դեկտեմբերի 2021 թվականի N 1325

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 15-Ն հրամանով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Չարենցավանի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» թիվ 859 որոշումը, ***որոշում եմ.***

1. 2021 դեկտեմբերի 08-ին ժամը 10:00-ին Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներ՝ քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետի /ծածկագիր 2.1-2/, առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի /ծածկագիր 2.1-3/, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետի /ծածկագիր 2.1-4/, զարգացման ծրագրերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի /ծածկագիր 2.1-5/, ներքին աուդիտի բաժնի պետի /ծածկագիր 2.1-7/ ատեստավորումը անցկացնելու նպատակով ստեղծել ատեստավորման հանձնաժողով՝ ՀՀ Կոտայքի մարզպետի, համայնքապետարանի, Չարենցավան համայնքի ավագանու և Չարենցավանի ուսումնական հաստատությունների կողմից առաջադրված թեկնածուների անվանական տվյալների հիման վրա և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն ***հավելվածի:***

1.1 Լիազորված անձ նշանակել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սուրեն Մուրադյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի
2021 թվականի դեկտեմբերի 07-ի թիվ 1325 որոշման

08/12/2021
10:00

07/12/2021 11:40:09
Առաջատար

Հանձնաժողովի կազմը

Մաքսիմ Մելիքյան
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Համայնքի ղեկավարի խորհրդական
Այլ տվյալներ՝ meliqyanmagsim54@mail.ru

Վարդգես Չիլինգարյան
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Համայնքի ղեկավարի գլխ.խորհրդական
Այլ տվյալներ՝ charentsavan,kotayq@mta.gov.am

Սամվել Սահակյան
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Գլխավոր մասնագետ
Այլ տվյալներ՝ muxsi1960@mail.ru

Տիմա Թովմասյան
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Ավագ մասնագետ
Այլ տվյալներ՝ tomsamir@mail.ru

Նորայր Վարդանյան
Հաստատությունը՝ Ավագանի
Պաշտոնը՝ Ավագանի
Այլ տվյալներ՝ sevak.am@mail.ru

Գայանե Փանոսյան
Հաստատությունը՝ Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ
Պաշտոնը՝ Տնօրեն
Այլ տվյալներ՝ g-panosyan@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀԿոտայքիմարզիՉարենցավանհամայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանիանվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» դեկտեմբերի 2021 թվականի N 1324

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 18-ի «Չարենցավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 9 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

Հովհաննիսյան	Հայկ	AT0543979	30 000	դրամ
Ասատրյան	Շահեն	AU0313054	30 000	դրամ
Գեղամյան	Գևորգ	002974921	30 000	դրամ
Բաղալյան	Ալբերտ	AM0894244	30 000	դրամ
Ղազարյան	Մարսել	AU0324320	30 000	դրամ
Այվազյան	Գագիկ	AS0484285	25 000	դրամ
Ենգիբարյան	Անդրանիկ	009321696	20 000	դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«06» դեկտեմբերի 2021 թվականի N 1323

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1994 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ԹԻՎ 9 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և քննարկելով Չարենցավան քաղաքի 2-րդ թաղամաս 14-րդ շենք, բնակարան 43 հասցեի բնակիչ ***Արզիկ Ղավալյան*** 2021 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ 5092/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի հուլիսի 18-ի «Պետական ֆոնդի տներում բնակարանները քաղաքացիների կողմից անվճար սեփականաշնորհելու մասին» թիվ 9 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 2-րդ թաղամաս 14-րդ շենք թիվ 43 բնակարան) ***«Ղավալյան Հրատ Վլադիմիրի»*** անունը փոխարինել ***«Ղավալյան Հրայր Վլադիմիրի»*** անունով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**